Liahona, Nov. 2009, 109.
5. Thomas S. Monson, “Until We Meet Again,” *Liahona,* May 2009, 113.
6. “Tell Me the Stories of Jesus,” *Children’s Songbook*, 57.
7. Ալմա 1.25:
8. Հովհաննես ԺԴ.6:
9. Տես Աբրահամ 3.2-28:
10. Աբրահամ 3.27:
11. Տես Ղուկաս Բ:
12. Տես Ղուկաս Բ.7:
13. 3 Նեփի 27.29:
14. Տես Ղուկաս Ժ.21:
15. Տես Ղուկաս ԺԱ.2–4:
16. Տես 3Նեփի 17.11–24:
17. Մորմոն 6.17:
18. Տես Ղուկաս Դ.1–13:
19. Հովհաննես Զ.67: Անցյալ տարի երիտասարդների հետ խոսելիս, Նախագահ Մանսոնն ասել է. «Դուք … կկանչվեք պաշտպանելու այն, ինչին հավատում եք: Մինչև որ ձեր վկայության արմատները ամուր հողից կպած չլինեն, ձեզ համար դժվար կլինի դիմանալ նրանց ծաղրին, ովքեր հարցի տակ կդնեն ձեր հավատը» (*Liahona,* May 2009, 126):
20. Տես Մարկոս Ա.40–42:
21. Տես Ղուկաս ԺԸ.35–43:
22. Տես Մարկոս Զ.34–44:
23. Տես Մարկոս Դ.35–41:
24. Տես Հովհաննես ԺԱ.8–53:
25. Մորոնի 7.37:
26. Մարկոս 5.36:
27. Տես Ա Պետրոս Բ.21–25:
28. Տես Ղուկաս ԻԲ.47–48; ԻԳ.32–46:
29. Տես Հովհաննես Ի.11–23:
30. Տես 3 Նեփի 11–26:
31. Տես Զոզեֆ Սմիթ – Պատմություն 1:17:
32. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.104:
33. “Tell Me the Stories of Jesus.”
34. Մոսիա 3.17:
35. Երեց Դալին Հ. Օուքսը մի առիթով ասել է. «Երբ ես փոքր տղա էի, իմ երեկոների մեծ մասն անց էի կացնում գրքեր կարդալով: Իմ սիրված գրքերից էր *Աստվածաշնչի Հրաշքաթի Պատմությունը:* …, որը աստվածաշնչյան 168 պատմություններ էր պարունակում: Ես սիրում էի այդ պատմությունները և բազմիցս կարդում էի դրանք» (“Bible Stories and Personal Protection,” *Ensign,* Nov. 1992, 37):
36. Stella Oaks, “Thy Will Be Done,” in Leon R. Hartshorn, comp., *Remarkable Stories from the Lives of Latter-day Saint Women,* 2 vols. (1973–75), 2:184.
37. Ալմա 36.17–18:
38. Այսօր աշխարհում մենք ավելի քան երբևէ կարիք ունենք Ենոսի խոսքերի, որոնք ասվել են իր հոր մասին և լավ կլինի, որ մեր երեխաներն այդպես ասեն մեր մասին:
39. Նախագահ Մոնսոնը խոստացել է երիտասարդներին. «Երբ ընտանիք է սերմանվում, ավետարանի, Փրկչի և մեր Երկնային Հոր մասին ձեր վկայությունը կազդի այն ամենի վրա, ինչով դուք կանցնեք ձեր կյանքում: … Ձեր վկայությունն անընդմեջ կսնուցի ձեզ, ապահով կպահի ձեզ» (*Liahona,* May 2009, 126):
40. Հելաման 5.12:
41. Մոսիա 16.8:
42. Վարդապետություն և Ուխտեր 21.5:
43. Տես Ալմա 26.12:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Փակման խոսք

Տիրոջ փարոսը ազդանշանների է ուղարկում, որոնք հեշտ է ճանաչել և երբեք չեն տապալի:

Սա հիանալի փակման նիստ է: Ես հազվադեպ եմ լսել այսպիսի քարոզներ, այսքան քիչ խոսքերով, ինչպիսին մենք լսեցինք այսօր: Մենք բոլորս այստեղ ենք, որովհետև մենք սիրում ենք Տիրոջը: Մենք ուզում ենք ծառայել Նրան: Մեր Երկնային Հայրը մտածում է մեր մասին: Այդ մասին ես վկայում եմ: Ես ընդունում եմ Նրա ձեռքը բոլոր բաներում:

Կարճ սուրբ գրություն.

«Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի վստահիր:

Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նորան, և նա կուղղէ քո ճանապարհները»:[1]

Դա իմ կյանքի պատմությունն է:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք մոտենում ենք այս ուսուցանող և ոգեշնչող համաժողովի ավարտին: Լսելուց հետո մեր խոսնակների խորհուրդները և վկայությունները, ես համոզված եմ, որ մենք առատորեն օրհնվեցինք և ավելի վճռական դարձանք Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներով ապրելու հարցում: Մեզ համար օգտակար էր այստեղ լինելը: Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում յուրաքանչյուրին, ով խոսեց մեզ հետ, ինչպես նաև նրանց, ովքեր ասացին աղոթքները:

Երաժշտությունը զարմանահրաշ էր: Ես հիշեցի Վարդապետություն և

Ուխտերում սուրբ տողերը. «Քանզի իմ հոգին հրճվում է սրտաբուխ երգով. այո՛, արդարների երգն աղոթք է ինձ համար, և այն կպատասխանվի օրհնությամբ նրանց գլխին»:[2]

Հիշենք, որ համաժողովի ժամանակ մեր լսած ուղերձները կտպագրվեն Էնսայն և Լիահոնա ամսագրերի մայիսի համարներում: Ես ձեզ հորդորում եմ ուսումնասիրել այդ ուղերձները, խորհել դրանց ուսմունքների շուրջ, ապա կիրառել դրանք կյանքում:

Ես գիտեմ, որ դուք կմիանաք ինձ, շնորհակալություն հայտնելով այն եղբայրներին և քույրերին, ովքեր այս համաժողովին ազատվեցին: Նրանք լավ են ծառայել և նշանակալի ներդրում են ունեցել Տիրոջ գործին: Նրանց նվիրումը լիակատար էր: Մենք սրտանց շնորհակալ ենք նրանց:

Ձեռքերի բարձրացմամբ, այս համաժողովին մենք նաև հաստատել ենք եղբայրներին և քույրերին, ովքեր կանչվեցին նոր պաշտոնների: Մենք ուզում ենք, որ նրանք իմանան, որ մենք հաճույքով կաշխատենք նրանց հետ Վարդապետի մեծ գործը կատարելիս:

Իմ եղբայրներ և քույրեր, այսօր, նայելով մեր շուրջն աշխարհին, մենք տեսնում ենք լուրջ և մեզ մեծապես մտահոգող խնդիրներ: Աշխարհը, կարծես սահել է ապահովության հարթակից և հեռացել խաղաղության նավահանգստից:

Թույլատրելիությունը, անբարոյականությունը, պոռնոգրաֆիան, անազնվությունը և այլ չարիքների մի բանակ շատերին զցել են մեղքի ծովը և փշրել կորսված հնարավորությունների, բացթողած օրհնությունների և չիրականացած երազանքների սրածայր ժայռերի վրա:

Իմ խորհուրդը մեր բոլորի համար Տիրոջ փարոսին նայելն է: Չկա այնպիսի խիտ մառախուղ, այնպիսի խավար գիշեր, այնպիսի ուժգին քամի, այնքան մոլորված նավաստի, որ նրա փարոսը չկարողանա փրկել: Այն շողում է կյանքի փոթորիկների միջից: Տիրոջ փարոսը ազդանշաններ է ուղարկում, որոնք հեշտ է ճանաչել և որոնք երբեք չեն տապալի:

Ես սիրում եմ Սաղմոսի այս խոսքերը. «Տեր, իմ վեմ, և իմ բերդ և իմ ազատիչ. իմ Աստուած, իմ ամրություն, որին ես հուսացած եմ … Ես … Տիրոջը կանչեցի և իմ թշնամիներից [ես] կփրկվեմ»:[3]

Տերը սիրում է մեզ, իմ եղբայրներ և քույրեր, և կօրհնի մեզ, եթե մենք ապավինենք Նրան:

Որքան երախտապարտ ենք մենք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի համար, այն ողջ բարիքի համար, որ այն բերում է մեր կյանք: Տերը Իր օրհնությունները լցրել է մեզ վրա՝ որպես մի ժողովուրդ: Ես բերում եմ իմ վկայությունը ձեզ, որ այս աշխատանքը ճշմարիտ է, որ մեր Փրկիչն ապրում է, որ Նա առաջնորդում և ղեկավարում է Իր Եկեղեցին այստեղ՝ երկրի վրա:

Այժմ, մոտենալով այս համաժողովի վերջին րոպեներին, իմ սիրտը լցվում է և զգացմունքները հուզում են ինձ: Ես արտահայտում եմ իմ սերն ու երախտագիտությունը ձեզ: Շնորհակալություն ձեր աղոթքների համար իմ և Եկեղեցու բոլոր Գերագույն Իշխանավորների համար: Տերը լսում է ձեր աղոթքները և օրհնում է մեզ, ղեկավարում Իր արքայության գործերը կատարելիս այստեղ՝ երկրի վրա: Սրա համար մենք խորապես երախտապարտ ենք:

Հեռանալով այս համաժողովից, ես հայցում եմ երկնքի օրհնությունները յուրաքանչյուրիս համար: Մինչ կվերադառնաք ձեր տները ողջ աշխարհով մեկ, ես աղոթում եմ մեր Երկնային Հորը, որ Նա օրհնի ձեզ և ձեր ընտանիքները: Թող այս համաժողովի ուղերձները և ոգին արտահայտվեն այն ամենի մեջ, ինչ անում եք դուք ձեր տներում, ձեր աշխատանքի վայրում, ձեր ժողովներին և ձեր բոլոր գործերում:

Ես սիրում եմ ձեզ: Ես աղոթում եմ ձեզ համար: Թող Աստված օրհնի ձեզ: Թող Նրա խոստացված խաղաղությունը ձեզ հետ լինի այժմ և հավիտյան, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Առակաց Գ.5–6:
2. Վարդապետություն և Ուխտեր 25.12:
3. Սաղմոս ԺԸ.2,3: